ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/6-Ա-2

ք. Երևան «05» Մարտի 2021թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԱՐԱՏ ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 536-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Հ8, Երևան-Արտաշատ-Այգեվան կմ 26+400 - կմ 30+000 (Նոր Կյանք բնակավայր) ճանապարհահատվածի վրա գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն նախագծային փաստաթղթերի 365 օր:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են (նախագծային փաստաթղթերում) պայմանագրի N 3.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

4.1.1 Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 31 384 625 (երեսունմեկ միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար վեց հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ, որից 5 230 771 (հինգ միլիոն երկու հարյուր երեսուն հազար յոթ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 15 692 000 (տասնհինգ միլիոն վեց հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում և կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջրային կոմիտե	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Հ/Հ 900011036184	ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 1570053574860100
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՎՀՀ 04102505
գործառնական վարչություն	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
էլ. հասցե scws@scws.am	հեռ. 060 52 32 75
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	araratchanshin@mail.ru
պարտականությունները	Տնօրեն
ժամանակավոր կատարող	
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 05 » Նոյեմբերի 2021թ. կնքված
ՋԿ–ՀՄԱԱՇՁԲ-21/6-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Հ8, ԵՐԵՎԱՆ-ԱՐՏԱՇԱՏ-ԱՅԳԵՎԱՆ ԿՄ 26+400 - ԿՄ 30+000 (ՆՈՐ ԿՅԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ջրագիծ W3, ջրագծեր W4,W1-2,ջրագծեր W5,W5-1

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդամենը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
	Հողային աշխատանքներ				**34.60**
1.	Ասֆալտի և/կամ բետոնային շերտի կտրում սղոցով	մ	35.0	0.080	2.800
2	Ասֆալտի և/կամ բետոնե ծածկի քանդում մեխանիկական եղանակով (էքսկավատոր,պնևմատիկ կամ էլեկտրական մուրճ) կամ ձեռքով՝ հանված նյութի առանձնացումով, բարձելով ինքնաթափերին	$մ^3$	0.7	0.880	0.616
3	Տեղափոխում աղբավայր՝ միջին հեռավորությունը մինչև աղբավայր 5կմ	տ	1.4	0.450	0.630
4	Ասֆալտի տակ խճային հիմքի իրականացում փողոցումh=17սմ հաստությամբ՝ խճի մատակարարումով, տեղադրումով և տոփանումով 1.19մ3	$մ^2$	7.00	1.620	11.340
5	Խճային հիմքի վերին 4սմ հաստությամբ շերտի հագեցում բիտումով 4.12կգ/մ2, անհրաժեշտ նյութերի մատակարարումով	տ	0.029	145.620	4.223
6	Միջնահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում h=6սմ հաստությամբ	$մ^2$	7.00	4.000	28.000
7	III կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձում ինքնաթափ	$մ^3$	822.0	0.450	369.900
8	Տեղափոխում աղբավայր 5.0 կմ	տ	1463.2	0.450	658.440
9	III կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	43.0	1.800	77.400
10	Բարձում ինքնաթափեր ձեռքով	տ	76.5	0.280	21.420
11	Տեղափոխում աղբավայր 5.0 կմ	տ	76.5	0.450	34.425
12	IV կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձում ինքնաթափ	$մ^3$	550.00	0.620	341.000
13	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 5.0 կմ)	տ	990.0	0.450	445.500
14	IVկարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	29.00	3.440	99.760
15	Բարձում ինքնաթափեր ձեռքով	տ	52.2	0.280	14.616
16	Տեղափոխում աղբավայր՝ միջին հեռավորությունը մինչև աղբավայր 5կմ	տ	52.2	0.450	23.490

17	Խողովակի նախապատրաստական շերտ բերովի ավազից տոփանումով, h=10 սմ, արժեք, մատակարարում և տոփանում	մ³	141.0	4.200	592.200
18	Խողովակի վրա բերովի ավազով պաշտպանիչ շերտի իրականացում՝ ապահովելով խողովակի վերին եզրից 0.20մ բարձրություն, տոփանումով	մ³	505.0	4.200	2121.000
19	Խրամուղու ետլիցք ավազով տոփանումով	մ³	787.0	4.200	3305.400
	Ընդամենը ըստ 1.1 բաժնի				**8152.160**
	Խողովակային աշխատանքներ				27.624
1	Պոլիէթիլենե խողովակ OD110, PN10, արժեք, մատակարարում, մոնտաժ և փորձարկում	մ	2034	2.800	5695.200
2	Պոլիէթիլենե եռաբաշխիկ OD125, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	9.050	9.050
3	Պոլիէթիլենե եռաբաշխիկ OD110, PN 10, արժեք,մատակարարում և մոնտաժ	հատ	1	8.500	8.500
4	Պոլիէթիլենե անցում OD125/110, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2	3.900	7.800
5	Պոլիէթիլենե անցում OD110/75, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	3.300	3.300
6	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN125, PN 10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	67.860	67.860
7	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN100, PN 10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4	33.320	133.280
8	Թուջե կցաշուրթավոր սողնակ DN80, PN 10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	23.240	23.240
9	Ստորգետնյա հիդրանտ DN125, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	53.350	53.350
10	Կցաշուրթավոր ճկուն միացում ՊԷ խողովակների և սողնակների միացման համար DN125 PN10.արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	15.000	15.000
11	Կցաշուրթավոր ճկուն միացում ՊԷ խողովակների և սողնակների միացման համար DN100 PN10.արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4	11.485	45.940
12	Կցաշուրթավոր ճկուն միացում ՊԷ խողովակների և սողնակների միացման համար DN80PN10.արժեք,մատակարարում և մոնտաժ	հատ	1	10.100	10.100
13	Պոլիէթիլենե փողակ-կցաշուրթ պողպատե ազատ կցաշուրթով OD100/DN100, PN 10, արժեք,մատակարարում և մոնտաժ	հատ	2	8.550	17.100
14	Պոլիէթիլենե փողակ-կցաշուրթ պողպատե ազատ կցաշուրթով OD125/DN125, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	10.900	10.900
15	Պողպատե կցաշուրթավոր անցում DN100/80, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ (քաշը 1 հատի 8կգ) -1հատ	կգ	8.0	1.350	10.800
16	Պողպատե կցաշուրթավոր քառաբաշխիկ DN100, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ (քաշը 1 հատի 42կգ) -1հատ	կգ	42.0	1.350	56.700
17	Պողպատե կցաշուրթավոր քառաբաշխիկ հակահրդեհային հիդրանտի տակդիրով DN100, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ (քաշը 1 հատի 49կգ) -1հատ	կգ	49.0	1.350	66.150
18	Պոլիէթիլենե խցափակիչ OD110, PN 10 արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	3.656	3.656

19	Պոլիէթիլենե (PE) OD110 խողովակների լվացում և ախտահանում անհրաժեշտ նյութերի մատակարարումով	կմ	2.100	75.000	157.500
20	Պոլիէթիլենե ծալքավոր խողովակ-պատյան OD 300 արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	12.00	9.450	113.400
	Ընդամենը ըստ 1.2 բաժնի				**6508.826**
	Բետոնային աշխատանքներ				3.357
1	Ե/մետոնե կլոր հորի տեղադրում հավաքովի էլեմենտներից D=2,0մ, H=1500մմ 2հատ	մ³	2.42	33.662	81.462
2	Հատակի սալ ԿԱԴ 20 արժեքը	հատ	1	48.640	48.640
3	Պատի օղակի ԿԱ 20-15 արժեքը	հատ	1	106.166	106.166
4	Ճանապարային ծածկի սալի արժեքը, թուջե մտոցով	հատ	1	206.114	206.114
5	Ե/բետոնե կլոր դիտահորի տեղադրում հավաքովի էլեմենտներից D=1.5մ, H=1.5մ 1հատ	մ³	1.81	33.662	60.928
6	Հատակի սալ ԿԱԴ 15 արժեքը	հատ	1	37.33	37.330
7	Պատի օղակիԿԱ 15-9արժեքը	հատ	1	48.300	48.300
8	Պատի օղակիԿԱ 15-6 արժեքը	հատ	1	30.976	30.976
9	Ճանապարային ծածկի սալի արժեքը, թուջե մտոցով T տիպի	հատ	1	105.450	105.450
10	Մետաղական աստիճան 17.52 կգ մետաղի ծախսով, արժեք, մատակարարում և մոնտաժ 4հատ	կգ	35.0	0.500	17.500
11	Դիտահորերում սեյսմակայունության մետաղական կապող էլեմենտներ՝ արժեք, մատակարարում և մոնտաժ	կգ	59.52	0.615	36.605
12	h=12սմ հաստությամբ խճի ենթաշերտ դիտահորերի տակ՝ անհրաժեշտ նյութերի մատակարարումով	մ³	1.35	4.860	6.561
13	Բետոնե հենարանների իրականացում անհրաժեշտ նյութերի մատակարարումով, B15 դասի բետոնով	մ³	0.084	58.71	4.932
	Ընդամենը ըստ 1.3 բաժնի				**790.964**
	Մեկուսացման աշխատանքներ				0.037
1	Մետաղական էլեմենտների երկտակ ներկում ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ²	11.0	0.8	8.800
	Ընդամենը ըստ 1.4 բաժնի				**8.800**
	Տնային միացումներ				
	Հողային աշխատանքներ				12.546
1	Ասֆալտի և/կամ բետոնային շերտի կտրում սղոցով	մ	75.0	0.080	6.000
2	Ասֆալտի և/կամ բետոնե ծածկի քանդում մեխանիկական եղանակով (էքսկավատոր, պնևմատիկ կամ էլեկտրական մուրճ) կամ ձեռքով՝ հանված նյութի առանձնացումով, բարձելով ինքնաթափեր	մ³	0.592	0.880	0.521
3	Տեղափոխում աղբավայր՝ միջին հեռավորությունը մինչև աղբավայր 5կմ	տ	1.2	0.450	0.540
4	Խճային հիմնատակի իրականացում h =12սմ, ներառյալ նյութի արժեքը, մատակարարում, տեղադրումը և տոփանումը 5.88մ3	մ²	49.00	1.620	79.380
5	Միջնահատիկ ասֆալտբետոնե շերտի մատակարարում և տեղադրում h=6սմ հաստությամբ	մ²	49.0	4.000	196.000
6	III կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձում ինքնաթափ	մ³	265.0	0.450	119.250

7	Տեղափոխում աղբավայր 5.0 կմ	տ	471.7	0.450	212.265
8	III կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	15.0	1.800	27.000
9	Բարձում ինքնաթափեր ձեռքով	տ	26.7	0.280	7.476
10	Տեղափոխում աղբավայր 5.0 կմ	տ	26.7	0.450	12.015
11	IV կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձում ինքնաթափ	մ³	151.0	0.620	93.620
12	Տեղափոխում աղբավայր (միջին հեռավորությունը մինչև աղբավայր 5.0 կմ)	տ	271.8	0.450	122.310
13	IVկարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	39.0	3.440	134.160
14	Բարձում ինքնաթափեր ձեռքով	տ	70.2	0.280	19.656
15	Տեղափոխում աղբավայր՝ միջին հեռավորությունը մինչև աղբավայր 5կմ	տ	70.2	0.450	31.590
16	Խողովակի նախապատրաստական շերտ բերովի ավազից տոփանումով, h=10 սմ, արժեք, մատակարարում և տոփանում	մ³	32.0	4.200	134.400
17	Խողովակի վրա բերովի ավազով պաշտպանիչ շերտի իրականացում՝ ապահովելով խողովակի վերին եզրից 0.20մ բարձրություն, տոփանումով	մ³	159.0	4.200	667.800
18	Խրամուղու ետլիցք ավազով տոփանումով	մ³	260.0	4.200	1092.000
	Ընդամենը ըստ2.1 բաժնի				**2955.983**
	Խողովակային աշխատանքներ				21.837
1	Պոլիէթիլենե խողովակ OD25 PN 16, արժեք, մատակարարում և մոնտաժ,փորձարկումով	մ	274	0.555	152.070
2	Պոլիէթիլենե խողովակ OD25 P N 16 ջերմամեկուսիչով, արժեք, մատակարարում և մոնտաժ,փորձարկումով	մ	194	0.940	182.360
3	Խողովակաշարի լվացում ախտահանումով OD25-OD32, անհրաժեշտ նյութերի մատակարարումով	կմ	0.468	61.000	28.548
4	ՊԷ գոտի միացում OD110x3/4" PN10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	80	2.670	213.600
5	Ֆիլտր պարուրակավոր DN20, PN10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	80	3.100	248.000
6	Թիակավոր պարուրակավոր ջրաչափ DN20, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ,	հատ	80	9.200	736.000
7	Պարուրակային արույրե փական DN20, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	80	3.575	286.000
8	Կցորդիչ բրոնզե՝ երկկողմ պարուրակով (Նիպել) 3/4", արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	80	1.600	128.000
9	Ճկուն կցորդիչ DN20, PN 10 պոլիէթիլենային, պողպատյա և թուջե խողովակների միացման համար, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	80	3.300	264.000
10	Պոլիմերային որձ միացում OD25x3/4". մատակարարում և մոնտաժ, PN10	հատ	240	1.078	258.720
11	Պոլիմերավազային ջրաչափական հոր 0.6x0.6*0.6(h), արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	80	33.100	2648.000
	Ընդամենը ըստ2.2բաժնի				**5145.298**
	Ընդանուրը				**23562.031**
	Ընդամենը շահույթով (11%)				**26153.854**
	Ընդամենը ԱԱՀ - 20% ներառյալ				**31384.625**

* Կապալառուն աշխատանքները կատարում է Նոր Կյանք բնակավայր հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011036184
ՀՎՀՀ 02555816
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
էլ. հասցե scws@scws.am
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար
Հ/Հ 1570053574860100
ՀՎՀՀ 04102505
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
հեռ. 060 52 32 75
araratchanshin@mail.ru
Տնօրեն

Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

«05» Դեկտեմբեր

Հավելված թիվ 2
2021թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-21/6-Ա-2 ծածկագրով պայմանագրի

Հ8, ԵՐԵԱՆ-ԱՐՏԱՇԱՏ-ԱՅԳԵՎԱՆ ԿՄ 26+400 - ԿՄ 30+000 (ՆՈՐ ԿՅԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
(կողմերի կողմից համաձայնեցված)

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը** օր	
		օր	Ավարտը
1	Նախապատրաստական շրջան	**10**	365 օր
2	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում սղոցով	12	
3	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում և տեղափոխում թափոնավայր	10	
4	Փափուկ մնահողերի քանդում ձեռքով կողալիցքով	50	
5	Փափուկ մնահողերի քանդում էքսկավատորով բարձումով	45	
6	Փափուկ մնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով	45	
7	Նախապատրաստական շերտի ստեղծում ավազից տոփանումով	330	
8	Հետլիցք ձեռքով ավազից տոփանումով	255	
9	Հետլիցք օգտակար հանույթի մնահողերով մեխանիզմով, տոփանումով	225	
10	Պոլիէթիլենե Φ160-225մմ խողովակների մոնտաժ փորձարկումով	75	
11	Պոլիէթիլենե Φ75-110մմ խողովակների մոնտաժ փորձարկումով	13	
12	Պոլիէթիլենե Φ32-50մմ խողովակների մոնտաժ փորձարկումով	20	
13	Պոլիէթիլենե Φ25մմ խողովակների մոնտաժ փորձարկումով	270	
14	Պոլիէթիլենե և պողպատե խողովակամրանների տեղադրում	220	
15	Հավաքովի ե.բետոնե հորերի տեղադրում	25	
16	Պոլիմերավազային հորերի տեղադրում	260	
17	Ասֆալտբետոնե ծածկի իրականացում - նախապատրաստական շերտ, խոշորահատիկ, մանրահատիկ, միջնահատիկ	180	
18	Ճանապարհի լիցքի իրականացում գրեյդերով ավազակոպճային բերովի գրունտով		
19	Ջրագծերի լվացում, վարակազերծում	100	

20	Այլ աշխատանքներ /միաձույլ հոր և այլն/	250	
21	Շինաղբի մաքրում և հեռացում	10	
Ընդամենը		**365**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011036184
ՀՎՀՀ 02555816
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
էլ. հասցե scws@scws.am
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար
Հ/Հ 1570053574860100
ՀՎՀՀ 04102505
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
հեռ. 060 52 32 75
araratchanshin@mail.ru
Տնօրեն

Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

«05» Դեկտեմբեր

Հավելված N 3
2021թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-21/6-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231131/	Ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ	15 692 300	31 384 625	31 384 625	31 384 625	31 384 625	31 384 625	31 384 625	31 384 625	**31 384 625**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011036184
ՀՎՀՀ 02555816
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
էլ. հասցե scws@scws.am
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար
Հ/Հ 1570053574860100
ՀՎՀՀ 04102505
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
հեռ. 060 52 32 75
araratchanshin@mail.ru
Տնօրեն

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3.1
«05» Դեկտեմբեր 2021թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-21/6-Ա-2 ծածկագրով պայմանագրի

Հ8, ԵՐԵՎԱՆ-ԱՐՏԱՇԱՏ-ԱՅԳԵՎԱՆ ԿՄ 26+400 - ԿՄ 30+000 (ՆՈՐ ԿՅԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները համապատասխան նախագծային փաստաթղթերի

Շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետ

Վերականգնվող հատվածներ	*նվազագույն ժամկետ, տարի*	*Աղբյուրը և նորմատիվը*
Հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիա	30	Ըստ գրականության
Պոլիէթիլենե խողովակաշար, խողովակաամրաններով	50	ԳՕՍՏ ГОСТ 18599-2001
Պողպատե խողովակաամրաններ	20-25	20-25 տարի ճիշտ շահագործման և պրոֆեսիոնալ մոնտաժի պայմաններում: Ըստ ինտերնատային տվյալների
Պոլիմերավազային հոր	30	Ըստ արտադրող կազմակերպության
Ասֆալտբետոնե ծածկ	5	Ըստ արտադրող կազմակերպության

Կապալառուն պարտավորվում է շինարարության ավարտից հետո հայտնաբերված թերությունների բացահայտման դեպքում անմիջապես ձեռնարկել դրանց վերացումը՝ վերակառուցման, վերանորոգման միջոցով:

Կապալառուի հետվարտական թերությունների վերացման ժամկետը սահմանվում է 1 տարի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011036184
ՀՎՀՀ 02555816
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
էլ. հասցե scws@scws.am
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Ավշար
Հ/Հ 1570053574860100
ՀՎՀՀ 04102505
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
հեռ. 060 52 32 75
araratchanshin@mail.ru
Տնօրեն

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«05» Դեկտեմբեր 2021թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-21/6-Ա-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«06» Դեկտեմբեր 2021թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-21/6-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն